ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
բանասիրական գիտությունների դոկտոր
sushovh@mail.ru

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ բարեգործ, բարեգործություն, մեկենաս, բարոյականություն, Հովհաննես Թումանյան, Գրական ֆոնդ, բարեգործական ձեռնարկներ, «Հայ որբերի և գաղթականների օգնության հանգանակիչ կոմիտե»:

Նախաբան

Դարեր շարունակ չունենալով պետականություն՝ հայության մեջ բարեգործությունը ձեռք է բերել առավել մեծ նշանակություն, քանի որ պետականության բացակայության պայմաններում յուրաքանչյուր բարեգործ ստանձնել է նաև պետական գործառույթներ: Հայ ժողովրդի մեծանուն բարեգործների կողքին հավասարի իրավունքով կանգնում է Հովհաննես Թումանյանը, որի համար բարեգործությունը եղել է ոչ թե գործունեության մի կոնկրետ ոլորտ, այլ մի ամբողջ կյանք և արժեցել է ինքնազրկանք ու բազում չապրած տարիներ: Նրա բարեգործությունը իր ազգի հոգևոր ուժերի առավել լեցուն ու համապարփակ արտահայտությունն է:

Մեկենասները

Մինչ բարեգործ դառնալը Թումանյանը զգացել էր բարեգործության դերը իր տաղանդի զորացման գործում: Նա գյուղից մեծ քաղաք ուսանելու եկած մի պատանի էր, որն ուսման վարձը չտալու պատճառով դուրս մնաց Ներսիսյան դպրոցից և երիտասարդ տա-

ոիներին առանց մեկենասների չէր կարող կայանալ իբրև բանաստեղծ, հրատարակել իր գրքերը: Պարբերաբար ջերմախտից ու թոքաբորբից տառապող երիտասարդը չէր կարող խուսափել ժամանակին գրեթե անբուժելի թոքախտից, եթե մեկենասները չապահովեին նրա ապաքինումը ժամանակի լավագույն առողջարաններում՝ Աբասթումանում, Բորժոմում և այլուր:

Բանաստեղծի հովանավորները ժամանակի մեծահարուստները չէին, որոնցից ոմն «հայտնի տիկին» յոթ երեխայի հայր Թումանյանի մասին ասել էր, թե «բանաստեղծը մի՞թե այդքան երեխա կունենա»[1] : Նրանք պարզապես արվեստագետի տաղանդը գնահատող երկրպագուներն էին՝ քիչ թե շատ ապահովված շրջանակներից և պատկանում էին հասարակության ամենատարբեր խավերին՝ սկսած Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյանի Հայրիկից մինչև իշխանուհի Մարիամ Թումանյան, բժիշկ Արիստակես Զարգարյան (Ռուստեմ), նախ շերամի սերմի, ապա կաշվի առևտրով զբաղվող Փիլիպոս Վարդազարյան և այլք: Երբեմն միանվագ, երբեմն որոշ պարբերականությամբ բանաստեղծին օգնության ձեռք է մեկնել նաև Բաքվի Մարդասիրական ընկերությունը, Մոսկվայից՝ Ս. Շահազիզի հիմնադրամը:

Ամենից շատ Թումանյանին հովանավորել է **Փիլիպոս Վարդազարյանը**[2] (ընկերական շրջանում՝ Ֆիլիպ)՝ Բարեգործական ընկերության խորհրդի գանձապահը: Նա բանաստեղծի համար դարձավ ամուր հենարան, հուսալի նեցուկ: Ֆիլիպը նախ Թումայնանին նպաստ է նշանակում՝ ամսական 25 ռուբլի[3] , ապա անձամբ է հրա-

---

[1] **Հովհաննես Թումանյան**, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով,* հ. 9, Նամակներ (1885–1904), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 351 (այսուհետև՝ Թումանյան,հրատարակության տարեթիվը, հատորն ու էջը):

[2] **Փիլիպոս Հակոբի Վարդազարյան** (1858, Ներքին Ագուլիս, Օրդուբադի գավառ, Երևանի նահանգ – 1935, Թիֆլիս) - հրատարակիչ, մշակութային գործիչ:

[3] «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» (Լրամշակված հրատարակություն), հ. 1, 624 էջ, Երևան 2019, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. Գրականության

տարակում բանաստեղծի երկերը, և՛ հոնորար է տալիս հեղինակին, և՛ նրան է տրամադրում վաճառքից գոյացած ողջ գումարը[4]: Որտեղ էլ որ պոետը լիներ, նրա պարտքերը վճարում էր իր բարեկամ-հովանավորը[5]: Վարդազարյանի տարեց մայրը ծանր հիվանդության օրերին կազմում է կտակ, որտեղ հիշատակում է նաև Թումանյանի անունը: Սակայն բանաստեղծն այդպես էլ չի օգտվում այդ գումարից: Տիկնոջ մահից հետո կտակը կար, իսկ գումարը չկար: Բանաստեղծը նամակներից մեկում գրում է. «Դու միակը եղար իմ կյանքում, որ... այնքան սրտացավությամբ հոգ տարար իմ նյութական վիճակն ապահովելու... և միշտ էլ այնպես էիր տալիս, որ կարծես թե պարտ լինեիր»[6] :

Թումանյանը բազմիցս խոստովանել է Վարդազարյանի դերն իր կյանքում. Կենցաղն ու կյանքի տաղտուկը, «ճղճիմ, գրոշանոց հոգսերը» միշտ են խանգարել բանաստեղծին, և նա 1902 թ. օգոստոսի 6-ին դիմելով իր մեկենաս ընկերոջը՝ գրում է. «Այս բոլորի միջից թե կարողանամ մի բան հանել... թող հայոց ազգը շնորհակալ լինի քեզանից...»[7] :

Բարեգործությունը անշահախնդիր երևույթ է, այնուամենայնիվ, բումերանգի օրենքը կիրառելի է ամենուր: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ֆիլիպը ունեզրկվեց և գամվեց անկողնուն՝ հայտնվելով ծայր աստիճան աղքատության մեջ: Այս անգամ Թումանյանը հասավ նրան օգնության: 1921 թ. հոկտեմբերին Վար-

---

ինստիտուտ, ԹԹ հրատ. էջ 360, (այսուհետև ԹԺՀ, հրատարակության տարեթիվը և էջը):

[4] Նույն տեղում:

[5] Թումանյանի և Փ. Վարդազարյանի նամակագրությունը տե՛ս ԳԱԹ, ԹՖ, № 1054, 2046 (1017), 2049(1020), 1246 (g. 2, 661), Թումանյան 9, էջ 222–223, 241, 347, 371 և այլն: Տե՛ս նաև՝ «Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1869–1908)», Երևան, 2010, «Գիտություն» հրատ. (այսուհետև՝ ԹՏ), էջ 349, 384, 387, 425, 463, 475:

[6] Թումանյան 1997, հ. 9, էջ 182:

[7] Նույն տեղում, էջ 294:

դազարյանի քույրը՝ Մարուսյան, դիմում է բանաստեղծին, որպեսզի նա միջնորդի իշխանություններին կենսաթոշակ նշանակելու հարցում: Այդ նամակում, գրեթե կուրացած Ֆիլիպը դողդոջուն ձեռքով ավելացնում է. «Առանց որի սովամահ կլինեմ»[8]: Բանաստեղծը Գարեգին Լևոնյանի միջոցով անմիջապես կարգավորում է խնդիրը:

Թումանյանի մեկենաս-հովանավորների, անդավաճան բարեկամների ցանկում պայծառ մի անուն է իշխանուհի **Մարիամ Թումանյանը**՝ Արցախի մելիքներից սերող, իրավաբան և հասարակական գործիչ Մարկոս Դոլուխանյանի դուստրը[9]: Հայ մշակույթի բազմադարյան պատմությունը չի կարող մատնանշել մտավորական, արվեստասեր մի կնոջ և գրողի, նվիրյալ հովանավորի ու հովանավորյալի այնպիսի սերտ, անկեղծ ու ջերմ հարաբերություններ, ինչպիսիք եղել են իշխանուհու և բանաստեղծի միջև: Մարիամ Թումանյանը մշտապես համագործակցել է Կովկասի հայոց բարեգործական ընկերության հետ, զբաղվել որբախնամ գործունեությամբ, եղել է բարեգործական ընկերության աղջիկների որբանոցի կազմակերպիչն ու պատասխանատուն: Նրա բարեգործական ձեռնարկները մի ամբողջ ուսումնասիրության նյութ են: Իշխանուհին է հրատարակել բանաստեղծի «Մանկական գրադարան» շարքը, դիմել հազար ու մի անհատ բարեգործների, հիմնադրամների, Պե-

---

[8] ԳԱԹ, Թֆ թիվ 1065:

[9] **Մարիամ Մարկոսի Թումանյան** (Մարիա Մարկովնա Թումանովա, օրիորդական ազգանունը՝ Դոլուխանյան) – 21.06.1870, Թիֆլիս – 1947, Թբիլիսի հայ մշակույթի գործիչ, բարերար: 1902-ին Իշխանուհին Գաբրիել Սունդուկյանի հետ Թիֆլիսում հիմնել է Հայոց դրամատիկական ընկերությունը, մասնակցել է Հավլաբարի հայկական ժողովրդական թատրոնի ստեղծմանը: 1908-ին կազմակերպել է «Իշխանուհի Մ. Թումանյան և ընկերներ» հրատարակչությունը, լույս ընծայել գունավոր պատկերներով մանկական գրքեր: Առաջին աշխարհամարտի տարիներին իշխանուհու նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ գաղթականների համար ստեղծվել են կազմարարական, ջուլհակագործական, կարի ու կոշկագործական արհեստանոցներ, իսկ Հայաստանի առաջին Հանրապետության օրոք Երևանում նրա ջանքերով բացվել է հայկական դպրոց ու մանկապարտեզ:

տերբուրգի հայոց Եկեղեցական խորհրդին, Շահազիզի ֆոնդին, տարբեր ընկերությունների, կազմակերպել է Թումանյանի գրքերի բաժանորդագրությունը, մերժվել է հաճախ, բայց չի հուսահատվել, սիրողական ներկայացումներ էր կազմակերպել, անձամբ բեմ բարձրացել՝ հասույթը բանաստեղծին տրամադրելու համար, դիմել է Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով Դաշկովին՝ Թումանյանին կալանքից ազատելու խնդրանքով, արտասվել է հաճախ, երբ չի կարողացել օգտակար լինել, ուշագնաց է եղել, երբ բանաստեղծը կարիքից դրդված ստիպված էր խորհել քահանա դառնալու մասին: 1908 թ. մարտի 18-ի Ֆիլիպին ուղղված նամակում Թումանյանը գրում է. «Մարիա Մարկովնան է ... սկսել է՝ էս որբևայրի կանանցն է նստել կրուժևա գործել սովորեցնում, էս որբանոցի երեխաներին՝ երաժշտություն, աղքատներին՝ *նոր* տեսակի հովանավորություն, անգործներին՝ մեր աշխարհքում չլսված գործեր, հինգշաբթի երեկոների զրույցներ, և միշտ նոր ու նոր ծրագիրներ և նոր ու նոր գործեր»[10]:

Թումանյանի մեկենասների շարքում է նաև ժամանակի հայտնի մանկաբույժ, հասարակական գործիչ **Արիստակես (Ռուստեմ) Զարգարյանը**՝ Փիլ. Վարդազարյանի մորաքրոջ որդին [11]: Նա՝ որպես Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերության վարչության նախագահ, աշխատում էր իր հնարավորությունների սահմաններում օգտակար լինել բանաստեղծին՝ թարգմանություններ պատվիրելու, հոնորարի չափերի և այլ հարցերում:

---

[10] Թումանյան 1999, հ. 10, էջ 39:

[11] **Արիստակես Հայրապետի Զարգարյան** – (1864, Ներքին Ագուլիս, Օրդուբադի գավառ – 1935 Երևանի նահանգ) – բժիշկ, Թավրիզում խորհրդային հյուպատոսարանի գրական-գիտական ընկերության փոխնախագահ, Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության նախագահ, Թիֆլիսի «Զոկի ճրոյգ» թերթի խմբագիր (1919), 16 գրական երկերի հեղինակ (4-ը գրական լեզվով, 12-ը՝ զոկական բարբառով): Զբաղվել է նաև նկարչությամբ. իր կտավներում պատկերել է հիմնականում Ագուլիսի ու Գողթնի բնապատկերները:

Հայոց մեջ բարեգործությունը հաճախ կրել է միայն անհատական, մասնավոր բնույթ: Յուրաքանչյուրը, անկախ իր հնարավորություններից, փորձել է աջակցել մյուսին: Վրթ. Փափազյանը, որն ինքն է բազմիցս բանաստեղծից օգնություն խնդրել, փորձում է Մոսկվայից օգտակար լինել գրչակից ընկերոջը: Նա նույնպես, ինչպես և իշխանուհին, դիմում է Ս. Շահազիզին, որի անվան գրական հիմնադրամի տոկոսներից Թումանյանին 200ռ. նպաստ է հատկացվում[12]: Որոշում է երեկույթ կազմակերպել և ակնկալվող 5–6000ռ. արդյունքը հատկացնել պոետին, միաժամանակ առաջարկում է ուսանողներին հատկացվող բարեգործական հիմնադրամից ամսական 30ռ. նպաստ հատկացնել բանաստեղծին, որպեսզի նա կարողանա 1-2 տարի ուսանել Մոսկվայի համալսարանում: Փափազյանը նույնպես բանաստեղծին խնդրում էր. «Ի սեր Աստծո, դեռ քահանա չդառնաս, դեռ սպասիր»[13]:

Բարեգործության թումանյանական ընկալումը

Բարեգործության՝ Թումանյանի ընկալումը ձևավորվել է իր մեկենասների հովանավորության արժևորման, աշխարհայացքային մոտեցումների, բնավորության ու խառնվածքի հումանիստական էության խաչման կետում:

Բանաստեղծի համար բարի գործը կենսակերպ էր, հացի, օդի ու ջրի պես մի բան. նա միշտ և ամենուր հոգևոր արժեքներն ու բարոյականությունն էր դարձնում չափանիշ և բարեգործությունն ընկալում էր միմիայն բարոյականության տիրույթում՝ որպես հասարակության զարգացման անհրաժեշտ բաղադրիչ: Օրենքները հաճախ չեն պաշտպանում բարոյականն ու հոգևորը, և Թումանյանը

---

[12] Տե՛ս Վրթ. Փափազյանի 1899 թ. հոկտեմբերի 31-ի նամակը Թումանյանին Մոսկվայից (ԳԱԹ, ՌՖ, № 2302 (1165):

[13] ԳԱԹ, ՌՖ, № 2303(1166):

նկատում էր. «Օրենքներ կան, որոնցով ամոթ է օգտվել»[14]: «Այս բարոյական օրենքն է, որ հաստատելու ենք մեր մեջ»[15]:

Ի սկզբանե բարեգործության նպատակը եղել է մարդկությանը զորավիգ լինելը: Սակայն Թումանյանի ընկալումներում հայոց մեջ բարեգործությունը առաջին հերթին ազգային միասնականությունը ապահովող գործոն է, որը պետք է հենվի և՛ ազգային արժեքների, և՛ բարեգործության անհրաժեշտության գիտակցման վրա: Այս մոտեցումն ընկած է բարեգործության թումանյանական ընկալման ելակետային դրույթների հիմքում: Բանաստեղծի համոզմամբ բարեգործությունը ոչ միայն պետք է ապահովի հանրային ու ազգային միասնությունն ու համերաշխությունը, այլև պետք է հիմնված լինի բարոյականության վրա, և այն պետք է դաստիարակել մանկությունից ու սկսել դպրոցից:

Բանաստեղծը ներկայացնում է հետևյալ պահանջները՝ բարեգործը

ա) չպետք է վիրավորի նրա արժանապատվությունը, ում հանդեպ կիրառվում է,

բ) պետք է օժտված լինի սիրելու, նվիրվածության զգացումներով, հոգատարություն դրսևորելու, բարի գործ կատարելու անկեղծ ցանկությամբ,

գ) պետք է գործի կամովին ու սրտանց, աննկատ, առանց դիմացինին նվաստացնելու, առանց կեղծ բարեպաշտության, առանց բարեգործի դեր խաղալու փառասիրության,

դ) պետք է ունենա սեփական անձն ու ծառայությունները երբեք չցուցադրելու առաքինություն,

ե) պետք է հիմնվի ազգային բարձր արժեքների նկատմամբ հավատարմության վրա:

---

[14] **Թումանյան** 1994, հ. 6, էջ 138:

[15] Նույն տեղում, էջ 307:

Բանաստեղծի կյանքում բազմաթիվ են այս դրույթները կյանքի կոչող անձնական օրինակները: Նա միշտ գնահատում էր այն բարեգործներին, ովքեր իրենց հատկացրած գումարի տակ ստորագրում էին «Մի ոմն»: Նման ստորագրությամբ Մարիամ Թումանյանը դրամական օգնություն էր ցույց տվել Ղ. Աղայանին, որից հետո բանաստեղծը խրախուսում էր բարերար «քնքուշ բարեկամուհուն»՝ իր նամակներում նրան անվանելով «Իմ թանկագին մի ոմն»[16]: Նույնպիսի վարքագիծ էր դրսևորել Հայ գրողների կովկասյան ընկերությանն աջակցող մեկ այլ բարեգործ, որ Գրական ֆոնդին նվիրել էր 500ռ. գումար՝ «Մի ոմն» ստորագրությամբ:

Բանաստեղծն իր խոսքով ու գործով վստահեցնում էր, որ միայն մեծահարուստը չէ, որ կարող է բարեգործ դառնալ, և ունեցվածքը՝ «քսակը» չէ ամենակարևորը. «Թե որտեղից կամ ինչպես, էդ ամենից հեշտն է: Ամենից դժվարը հասկանալ ու կամավորելը, ցանկանալն է»[17]:

Թումանյանը բարեգործությունը բխեցնում էր առանձին մարդու բարոյական նկարագրից, նրա էության հատկություններից և մարդկային առաքինությունն ու ազնվությունը չէր դիտում սոցիալական պատկանելության տեսանկյունից, հետևաբար, բարեգործություն ակնկալում էր ողջ հասարակությունից: Հենց սրանով է պայմանավորված վերը նշված՝ բարեգործության՝ որպես ազգային միասնություն ապահովող գործոնի հռչակումը: Այս իմաստով նա կարևորում էր առանձին գործիչների ու հեղինակությունների դերը, որոնք պետք է ամեն մեկին ընկալելի դարձնեն, որ համազգային գործերը **ոչ թե առանձին անհատների մենաշնորհն են, այլ ողջ ազգի ընդհանրության, յուրաքանչյուր հայի գործը:** Այդպիսի ձեռնարկ էր նրա համար Արարատյան դաշտում Խաչատուր Աբովյանին հու-

---

[16] **Թումանյան** 1999, հ. 10, էջ 92:
[17] **Թումանյան** 1995, հ. 7, էջ 241:

շարձան կանգնեցնելու 1906 թ. Բաքվի Հայոց կուլտուրական միության նախաձեռնությունը: Հանգանակության համար կառավարության թույլտվությունը եղել էր դեռևս 1907 թ.: Սակայն երեք տարում անհրաժեշտ 18 հազար ռուբլու փոխարեն հավաքվել էր ընդամենը 200 ռուբլի: «Ամենքը միասին» ուղերձով բանաստեղծը դիմում է հայ հասարակությանը. «Դա մի տաղանդավոր գրողի արձան չի, դա մի անհատի արձան չի, դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է, որ կանգնելու է այնտեղ՝ Արարատի սրբազան դաշտում՝ սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն, թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ»[18]: Ինքն իր կողմից առաջարկում է նախաձեռնել նման մեկ այլ համազգային նշանակության գործ՝ կանգնեցնել Գրիգոր Նարեկացու հուշարձանը Վանա ծովի ափին՝ Նարեկա ժայռերի վրա, որպեսզի հայ գրականության վիթխարի հանճարը, ավելի մոտ լինի իր սիրած Աստծուն, խոսի նրա հետ «ի խորոց սրտի»[19]:

Այս կոչից ուղիղ մեկ ամիս հետո միայն «Հորիզոնի» խմբագրությունում արձանի համար հավաքվել էր 409 ռուբլի 15 կոպեկ, ինչը կրկնակի ավելի էր, քան երեք տարիների ընթացքում հայ բոլոր պարբերականների ու ընկերությունների հանգանակած գումարը միասին վերցրած: Թումանյանն առանձին ուղերձով դիմում է նաև արևմտահայությանը. «Ազգերի կյանքում գործեր ու անուններ կան, որոնց համար չպետք է գոյություն ունենա որևէ սահման… ո՞ւր է … տաճկահայը»[20]:

Թումանյանը բարեգործությունը յուրաքանչյուրի պարտականությունն ու իրավունքն էր համարում միաժամանակ: Նրա խոսքերով՝ Աբովյանին արձան կանգնեցնելը «վերապահված է ամեն մի

---

[18] **Թումանյան** 1994, հ. 6, 265:
[19] Նույն տեղում, էջ 266:
[20] **Թումանյան** 1999, հ. 8, էջ 467:

հայի... կոպեկներ լինեն թող, միայն թե ամենքը գան ու մասնակցեն, որովհետև նա ամենքինն է ու ամենքը նրա մեջ են»[21]: Այս գաղափարի դաստիարակությունը բանաստեղծը սկսում էր երեխաներից, որոնք հենց նրա կոչով մասնակից էին դարձել բարեգործական որոշ ձեռնարկների: 1911 թ. մայիսին մանկական ամսագրում՝ «Հասկերում», Թումանյանը դիմել էր երեխաներին ոչ այնքան հանգանակությանը նպաստելու, որքան բարեգործության կարևորությունը նրանց գիտակցությանը հասցնելու և համազգային գործերին մասնակից լինելու անհրաժեշտությունը ընկալել տալու համար. «Շատն ու քիչը էստեղ նշանակություն չունի,- ասում էր մանուկների սիրելի բանաստեղծը.- բանը սիրտը, սերը, զգացմունքն է: Թող հինգ կոպեկ լինի տվածը: Միայն թե ամենքն էլ լինեն... Երեխե՛ք ջան: «Հասկերի» ընթերցող երեխեք, դուք էլ ղրկեցեք, որ դուք էլ մասն ունենաք մեր անմահ Աբովյանի արձանի մեջ»[22]:

Իբրև մանկագիր բանաստեղծը բարեգործության գաղափարը արծարծում էր թե՛ Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների խորհրդում, որի անդամն էր նա, թե Գայանյան դպրոցի ծնողական խորհրդում, որի նախագահն էր:

Մեծահարուստներին դիմումներ անելը բանաստեղծի համար անթույլատրելի էր, քանի որ բարեգործության՝ «կամովին և սրտանց» լինելու դրույթը նրա ընկալումներում առաջնային էր: 1912 թ. Գրական ֆոնդը ձևավորելիս Թումանյանը որոշում է կանոնադրության մեջ հատուկ արձանագրել՝ երբեք չդիմել անհատների կամ մեծահարուստների: Բարեգործությունը չպետք է ուղեկցվի «լալկանության ու հառաչանքի ողորմուկ ձայնով» դրույթի[23] դրսևորումը տեսնում ենք «Վիրավորական հարգանք» հոդվածում. «Ասպետա-

[21] **Թումանյան** 1994, հ. 6, էջ 266:
[22] Նույն տեղում, էջ 337:
[23] Նույն տեղում, էջ 154:

կան զգացմունքը պակասում է մեր մեջ: Մեր մարդը սիրում է խեղճությունն ու լացը և զարդարվում է նրանցով... Ամոթ է վերջապես»[24]: Թումանյանը բազմիցս դիմել է ազգի ընդհանրությանը՝ բարեգործություն անելու կոչերով, սակայն ոչ թե լալահառաչ ձայնով, այլ գործի կարևորության շեշտադրումով:

Ազգային ու անհատական արժանապատվության խորհրդանիշ բանաստեղծը հավատարիմ էր նաև իր առաջադրած այն դրույթին, ըստ որի՝ բարեգործը երբեք չպետք է վիրավորի անձին, ում աջակցության ձեռք է մեկնել: Բազմաթիվ են օրինակները, երբ Թումանյանը, մշտապես լինելով կարիքի մեջ, հրաժարվել է նյութական օգնությունից, թոշակներից ու նպաստներից, եթե մատուցման ձևի մեջ զգացել է իր արժանապատվությունը ոտնահարող վիրավորական ինչ-որ մի բան: Այդպես նա մերժել է 1901 թ. Բաքվի հայ գրասերներից պարբերաբար ստացվող նյութական օժանդակությունը, երբ պայման են դրել անձամբ ներկայանալ Բաքու[25]: Մեկենասի բուն կոչումը Թումանյանը տեսնում էր արվեստագետի համար ոգևորվելու պայմաններ ապահովելու մեջ: Եղել են այնպիսի հովանավորներ, որոնց «բարեգործության» առիթով նա ասել է. «Երանի թե չլիներ այն գրողն ու գրականությունը, որ ընկած չլիներ սրա հուսով ու սրա մուննաթին...»[26]:

Քիչ չեն եղել դեպքերը, երբ բարեգործության անվան տակ փորձեր են արվել շահագործել արվեստագետի ունեցվածքը՝ նրա տաղանդը: Թումանյանը չէր ընդունում ցանկացած գործարարի այնպիսի «հովանավորություն», որի նպատակը ներդրում անելն էր հանուն անձնական շահույթի: 1902 թ. Մխիթար Տեր Անդրեասյանը դիմում է Բաքու՝ նախիջևանցի մեծահարուստ հրատարակիչ Ավե-

---

[24] Նույն տեղում, էջ 156:
[25] **Թումանյան** 1997, հ. 9, էջ 248–249:
[26] Նույն տեղում, էջ 350:

տիս Պողոսյանին, որպեսզի վերջինս աջակցի գրողին՝ հրատարակելով նրա երկերը: Պողոսյանը համաձայնվում է պայմանով, որ հեղինակը գումարի դիմաց վաճառի իր գործերի հրատարակության իրավունքը: Բանաստեղծը մերժում է Մ. Տեր-Անդրեասյանի օգնության առաջարկը՝ ասելով. «Եթե ուզում ես Պողոսյանին օգնել, նա կարոտ չի քո օգնությանը, իսկ թե ինձ ես լավություն անում էլ ի՞նչ պայման»[27]:

1903 թ. ժողովածուի հրատարակության ծախսերը հոգալու և բանաստեղծին նյութապես ապահովելու նպատակով, նրա հովանավորները կազմել էին դիմում-շրջաբերական՝ ակնկալելով բաժանորդների թվի աճ և հեղինակին հասանելիք արդյունքի մեծացում[28]: Գրողի արժանապատվությունն այնպես է ընդվզում, որ չի հանդուրժում ոչ մի բացատրություն, դիմում-խնդրագիրը արդարացնող ոչ մի պատճառաբանություն: Նա կտրուկ մերժում է իր կամ իր ընտանիքի անվան հիշատակությամբ որևէ մեկին դիմելու և այդ ճանապարհով նյութապես իրեն աջակցելու առաջարկը. «Ես միանգամայն հրաժարվեցի... այդ դեպքը, որ մեզանում ոմանց նախանձն է շարժել, այնքան խիստ ազդեց ինձ վրա...»[29]: Դիմելով իր հովանավորներից մեկին՝ Ֆիլիպին՝ նա գրում է. «Ասում եմ, հիշեցնում եմ, որ սիրես՝ բացի իմ ֆիզիկական առողջությունը, մի քիչ էլ հոգու հպարտությունը ... Մի՞թե դեռ պետք է շրջաբերականով հռչակեմ իմ խեղճությունն ու նպաստներ ժողովեմ...Այդ դիմումը չպետք է լինի»[30]: Թումանյանը միշտ ընդգծում էր, որ բարեգործություն չի նշանակում ողորմություն, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է մշակույթի գործչին ու գիտնականին. նրանց օգնելը հասա-

---

[27] Նույն տեղում, էջ 295:

[28] **Թումանյան,** *Ուսումնասիրություններ և հրապարակումներ,* հ. 4, Եր., 1985, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 371:

[29] **Թումանյան,** հ. 9, էջ 359:

[30] Նույն տեղում, էջ 343:

ռակության սրբազան պարտքն է, և գիտության ու գրականության պաշտպանությունը համազոր է ժողովրդի կողմից իր իսկ ազգային շահերի գիտակցմանն ու պաշտպանությանը:

Թումանյանը վստահ էր, որ հասարակությունը պետք է միշտ բարձր գնահատի բարեգործներին ու բարեգործությունը՝ անկախ նրա հեղինակի սոցիալական ու ազգային պատկանելությունից: Նրա հասցեին հաճախ են հնչել մեղադրանքներ՝ մեծահարուստների հետ մտերիմ լինելու, նրանց հետ համատեղ գործելու, նրանց բարեգործությունն ըստ ամենայնի գնահատելու համար:

1910 թ. նոյեմբերի 9-ին Շիրվանզադեի գրական գործունեության 30-ամյակի հոբելյանական հանձնաժողովը, որի անդամ էր նաև բանաստեղծը. նախագահում էր մեծահարուստ բարեգործ Ալ. Մանթաշյանը: Նա ընտրվել էր միաձայն, հանձնաժողովի 14 անդամների, այդ թվում, Թումանյանի դրական քվեով:

Մոսկվայի հայ գրողները գրում են. «Որքա՞ն արդյոք պատվաբեր է ...թե՛ հոբելյարի և թե՛ մանավանդ հայ գրականության համար, երբ այնտեղ, ուր կան Սունդուկյան, Աղայան, Լեո... Թումանյան, Իսահակյան և ուրիշներ, ¬ այնտեղ այդ պատվաբեր աթոռը տրվում է սոսկ գրականասեր «նավթահանքերի» կամ բարեգործ հռչակված «նավթի արքաների» տրամադրության տակ...»[31]:

Թումանյանի և Հ. Մելիքյանի բարեկամությունը շատերը բացատրում էին մեծահարուստի՝ մեկենաս հռչակվելու փառասիրությամբ: Լեոն գրում է. որ «Մելիքյանը ...գրական մեկենասի հովեր էր առնում, մոտենալով Հովհաննես Թումանյանին»[32]: Իսկ բանաստեղծի համար էական էր, որ Մելիքյանի շնորհիվ «Հորիզոնի» նյու-

---

[31] Տե՛ս Շիրվանզադեին ուղղված Ց. Խանզադյանի, Ալ. Ծատուրյանի, Կ. Կուսիկյանի, Գ. Միքայելյանի, և Վ. Տերյանի շնորհավորական հեռագիրը՝ հրապարակված մամուլի տարբեր օրգաններում: Տե՛ս **Վահան Տերյան,** *Երկերի ժողովածու չորս հատորով,* հ. 4, Եր., 1979, «Սովետ. գրող» հրատ., էջ 22:

[32] ՌԺՀ 1919, էջ 71:

թական վիճակը բարելավվում է, հնարավորություն է ստեղծվում թե՛ թերթի գոյատևման, թե՛ նրան աշխատակցող բոլոր գրողներին հոնորարներով ապահովելուն: Բանաստեղծին հետաքրքրում էր ոչ թե այն, որ Համբարձում Մելիքյանը «ոսկեզօծ կահկարասիք» է բերել Փարիզից, այլ այն, որ նա ամբողջությամբ ապահովում էր «Հորիզոն» լրագրի տպագրությունը 1911 թ. ամռանը[33]:

Լեոյի հավաստիացմամբ՝ Համբարձում Մելիքյանը անձամբ Թումանյանին երբեք չի օգնել, նրա որևէ գրքի հրատարակությանը երբևէ չի մասնակցել, չի թեթևացրել բանաստեղծի տնտեսական բեռը. «Մելիքյանը պիտի մեկենաս լիներ այսպիսի գործում»,- վստահ էր Լեոն և կարծում էր, որ «Հորիզոնին» օգնելը, ֆինանսական ճգնաժամից դուրս բերելը մեծահարուստի համար սոսկ հասարակության մեջ ավելի ազդեցիկ դիրք ունենալու նպատակ էր հետապնդում[34]:

Բանաստեղծի համար արժեքները միայն բարոյական էին. նա լավն ու վատը, չարն ու բարին, արդարն ու անարդարը կարող էր տեսնել ցանկացած մարդու և ցանկացած հայի մեջ՝ անկախ սոցիալական և կուսակցական պատկանելությունից: Այսպես Լեոն Թումանյանի փոխարեն նեղանում ու վիրավորվում էր նրա բարեկամից՝ Համբարձում Մելիքյանից, ով բանաստեղծին չէր օգնում, իսկ Թումանյանը սրտանց հարգում և բարեկամություն էր անում Հ. Մելիքյանի հետ, որովհետև նա օգնում էր հայ մշակույթին:

Միաժամանակ, Թումանյանը կարծում էր, որ բարեգործն ու բարեգործությունը նույնպես ունեն հասարակական գնահատանքի, բարոյական վարձատրության կարիք: Եվ որքան այդ վարձատրությունը լինի ժամանակին և չուշանա տարիներով ու դարերով, այնքան կշահեն հասարակությունը, գրականությունն ու արվեստը,

---

[33] **Թումանյան** 1999, հ. 10, էջ 120:

[34] Նույն տեղում:

ողջ մշակույթը: Թումանյանը հաճախ էր կրկնում Նիցշեի խոսքը՝ «Գնահատել, նշանակում է ստեղծել»[35]: Գնահատելով բարեգործությունն ու նրա հեղինակին Թումանյանը ձգտում էր ստեղծել ներդաշնակ ու միասնական ազգային կյանքով ապրելու հնարավորություն:

Բարեգործությունները

Բարեգործներ են ինչպես մեծահարուստ հովանավորներն ու մեկենասները, այնպես էլ թե՛ համազգային կարևոր գործերին, թե՛ կարիքի մեջ գտնվող առանձին անհատներին աջակցության ձեռք մեկնող, ամենահամեստ նյութական ներդրումն ունեցող կամ, պարզապես, զանազան բարեգործական ֆոնդեր հիմնող անհատները:

«Միայն սեր ու բարի ցակություն ունեմ ամենքի համար»[36], «Ես ինքս մեծ փափագ ու հակումն ունեմ ուրիշներին հովանավորելու, իմ ունեցածը ուրիշների հետ բաժանելու, ով կարիք կունենար»[37],- ասում էր Թումանյանն ու կյանքի յուրաքանչյուր քայլափոխի ապացուցում իր այդ խոստովանության անկեղծությունը: Բանաստեղծի կյանքը հավաստում է նաև, որ բարեգործությունը ամենևին էլ մեծահարուստների շնորհը չէ**: Լինել կարիքի մեջ և լինել բարեգործ միաժամանակ**: Այս իմաստով Թումանյանը հավասարը չունի մեր մշակույթի պատմության մեջ: Դուստրը՝ Աշխենը, գրում է. «Մի քանի խանութներ կային, որտեղ մեր պարտքերը չէին վերջանում: Եվ պետք է խոստովանեմ, որ հյուրերը ավելի լավ էին սնվում, քան երեխաները կուլիսներում»[38]: Նույնի վկայությամբ՝ «պատահում էր, որ կոշիկ չունենալու պատճառով երեխաներից մեկը դպրոց չէր

---

[35] **Թումանյան** 1994, հ. 6, էջ 392:

[36] **Թումանյան** 1995, հ. 7, էջ 374:

[37] Նույն տեղում, հ. 9, էջ 241:

[38] «Թումանյանի Զավակները Աշխեն. Հուշեր և ընտանեկան պատմություններ», Եր., «Մուղնի» հրատ., Հովհաննես Թումանյանի թանգարան, 2011, 408 էջ: (Արևելք-Արևմուտք մատենաշար), էջ 60:

գնում»[39]: 1910 թ. վերջին Աշխեն Թումանյանը դուրս էր մնացել Կանանց բարձրագույն դասընթացներից՝ ուսման վարձը չտալու պատճառով[40]: Համլիկը դուրս էր մնացել Գևորգյան ճեմարանից 1915 թ. օգոստոսին՝ ուսման վարձը ուշացնելու պատճառով, հենց այն պահին, երբ բանաստեղծն ու իր դուստրը՝ Նվարդը, Էջմիածնում խնամում էին որբերին:

Գրողին բնորոշ էր հասարակական ակտիվ գործունեության ջիղը, մարդկանց մի գեղեցիկ նպատակի համար ոգեշնչելու, համախմբելու ունակությունը: Մշտապես կարիքի մեջ գտնվող բանաստեղծն աչքի էր ընկնում ամենքին աջակցելու պատրաստակամությամբ, հարուստներից շատ ավելի շռայլ դրսևորումներով, հասարակության մեջ իր բարձր ու հեղինակավոր դիրքով:

Թումանյանի շնորհիվ ֆինանսավորվել են տարբեր բարեգործական նախագծեր և ծրագրեր, կազմակերպվել են խոշոր միջոցառումներ, սահմանվել են կրթական, մշակութային զանազան հիմնադրամներ, հայթայթվել են միջոցներ, հովանավորվել են առանձին անհատների կոնկրետ խնդրանքներ:

Դեռ 30-ը չբոլորած բանաստեղծի խոսքը հարգում էր Ամենայն հայոց հայրապետը՝ Խրիմյանը: Նա, 1898 թ. դեկտեմբերին, ընդառաջ գնալով Թումանյանի խնդրանքին, հակադրվելով Էջմիածնի Սինոդի որոշմանը, Ղ. Աղայանին ցմահ ամսական 25 ռուբլի թոշակ է նշանակում: Բանաստեղծի միջնորդությամբ է ֆինանսավորվում Ղ. Աղայանի «Քյորօղլու» հրատարակությունը, ի կատար է ածվում երիտասարդ դերասան Կարապետ Գալֆայանի Փարիզում կատարելագործվելու երազանքը, Գ. Լևոնյանի՝ Էջմիածնի թոշակառու սան դառնալը Ռուսաստանում, վճարվում է գիմնազիայի աշակերտուհու ուսման վարձը: Բանաստեղծն իր համար երբեք ոչ մեկին

[39] Նույն տեղում, էջ 59:
[40] Նույն տեղում, էջ 58:

չէր դիմում, սակայն ուրիշների հոգսերը հոգալու համար միջնորդում էր բոլոր նրանց, ովքեր կարող էին օգտակար լինել:

Թումանյանի ծանրակշիռ խոսքին ու անվերապահ հեղինակությանը ծանոթ էին ամենքը: Այդ պատճառով, բարեգործական ցանկացած ձեռնարկ իրականացնելիս, նախաձեռնողները դիմում էին առաջին հերթին նրա օգնությանը: Խորհրդային իշխանությունները ջանք չխնայեցին համոզելու, որ քաղցկեղով արդեն հիվանդ բանաստեղծը ստանձնի ՀՕԿ-ի առաջին նախագահի պաշտոնը և մեկնի Պոլիս՝ հանգանակություն կազմակերպելու, Հայաստանի սովյալներին օգնություն բերելու և Սփյուռքն ու հայրենիքը կամրջելու իր պատմական դերն իրականացնելու:

Թումանյանի բարեգործությունը ընդգրկել է հայ ազգային կյանքի բոլոր ոլորտները՝ կրթամշակութային, ռազմական, բայց ամենից շատ՝ սոցիալական՝ ուղղված ծանոթ ու անծանոթ առանձին անհատների, մասնավորապես արվեստագետների ու հայագետների, մշակույթի գործիչների ու գիտնականների, որբերի ու գաղթականների կարիքներին:

Կազմակերպելով և 10 տարի շարունակ ղեկավարելով Հայ գրողների կովկասյան ընկերությունն ու Գրական ֆոնդը՝ Թումանյանը միակն էր, որ ժամանակի ընձեռած սուղ հնարավորություններով առավելագույնս նեցուկ դարձավ գրողներին ու գրականությանը մոտ կանգնած մտավորականներին[41]: Բանաստեղծը, լինելով

[41] Կովկասյան ընկերության արխիվում 1912–1914 թթ. նվիրատուներին շնորհակալություն հայտնող 27 գրություն է պահպանվել (ԳԱԹ, ԿԸֆ, № 97): Շնորհակալական խոսքով նվիրատուների ցուցակներ էին տպագրվում մամուլի տարբեր օրգաններում: Գրական ֆոնդի բազմաթիվ նվիրատուներից էին Սամսոն Հարությունյան (100 ռ.,), Համբարձում Մելիքյան (1000 ռ.,), Կոստանդին Ալիխանյան, Տիգրան Հովհաննիսյան, Գարեգին Ենգիբարյան, Հ. Բերբերյանը (5000 ռ.): «Զուգուլբայի ջրմուղ», «Զոկ կանանց» միությունները, «Գողթան» ապահովագրության կոմիտեն, Գորիսի գրասերների խմբակը, Կարսի գիմնազիան, «Նոր հոսանք», «Պատանի» ամսագրերը, «Իզմիրյան» ընկերությունը: Հօգուտ գրական ֆոնդի

Գրական ֆոնդի ու գրողների ընկերության նախագահ՝ մնաց միայն նվիրատուների շարքում և երբեք ոչ մի դրամ չօգտվեց այդ ֆոնդից, թեև դրա կանոնադրական իրավունքը լիուլի ուներ: Նա 100-ից 500 ռ. սահմաններում նպաստներ հատկացրեց Վ. Տերյանին, Շիրվանզադեին, Վրթ. Փափազյանին, Դ. Դեմիրճյանին, Զ. Եսայանին, Լեոյին, Հովհ. Հովհաննիսյանին, Աթ. Խնկոյանին, Ա. Վշտունուն, Թ. Թորամանյանին, Ռաֆֆու քույր Ջավահիրին, Սիամանթոյին, Դ. Վարուժանի ընտանիքին և այլոց:

Երկար տարիներ Թումանյանը եղել էր նաև հայագիտական ու պատմական ֆոնդ ստեղծելու համար պայքարի առաջամարտիկներից ու ղեկավարներից մեկը: Նաև նրա ջանքերի արդյունքում 1914 թ. մարտի 29-ին ստեղծվեց Հայոց պատմական և հնագիտական ընկերությունը[42]:

Առաջին աշխարհամարտի տարիներին Թումանյանը երկու ֆոնդ էր կազմել. մեկը Հայկազյան ընկերությունն էր, որի միջոցով հանգանակված գումարը ուղղվում է գիտնականներին նյութապես ապահովելու, ազգային ակադեմիա և համալսարան հիմնելու նպատակին: Մյուս ֆոնդը, որ ստեղծում է Թումանյանը 1917 թ., միջոցներն ուղղում էր զենք ու զինամթերք գնելու, հայ կամավորին օգնելու նպատակին: Եղիշե Թադևոսյանի ղեկավարությամբ և բանաստեղծի մասնակցությամբ 1920 թ. Թիֆլիսում ստեղծվում է «Կոմիտաս» միությունը, որն ավելի ուշ միանում է Հայարտանը, որի նախագահը Թումանյանն էր:

Մեծ թիվ են կազմում բանաստեղծի գրասեղանի ու գրապահարանների պահոցներում գտնվող խնդրագրերը: Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ ժամանակի ոչ մի պաշտոնյա կամ մեծա-

---

գումարներ էին հավաքվում «Հորիզոն», «Մշակ», «Կովկասի լրաբեր», «Слово» և այլ թերթերի խմբագրությունների միջոցով:

[42] Իշխանությունների կողմից թույլտվությունը տրվել էր 1913 մայիսի 29-ին: Տե՛ս նաև՝ ԵԼԺ 10, 545:

հարուստ բարեգործ այդպիսի քանակի և այդքան տարաբնույթ խնդրանք – հանձնարարականների, հաճախ պահանջ – պարտադրանքների հեղեղի տարափ չի տեսել, ինչպես Թումանյանը: Չունենալով որևէ պաշտոն՝ նա ձեռք էր բերել գործատուի համբավ: Ծանոթ ու անծանոթ, հայ ու նույնիսկ այլազգի բանաստեղծին դիմում էին այնպիսի տոնով ու այնպիսի խնդրանքներով ու նաև պահանջներով, որոնցով չէին դիմի ոչ մի բարեգործի կամ հաստատության:

«Գալիս եմ կրկին ու կրկին անհանգիստ անելու քեզ և խնդրելու, որ մայիս ամսվա ընթացքում տնօրինես երեխանցս բախտը»:

«Գալիս եմ կրկին ու կրկին հիշեցնելու, որ ինձ... Թիֆլիսում տեղավորես... ... հազար ու մի ծանոթ-անծանոթ մարդու լավություն ես անում»:

«Եթե էստեղ մեռնեմ,- Դու պարտական կմնաս իմ կես դյուժին երեխանցն ...

– Բայց Դու, որ ուզենաս,- և պիտի՛ ուզենաս.... էդտեղ եկած տերտերներից, ինչո՞վ եմ պակաս...Ինձ միայն գործ տուր»:

«Գիտեմ՝ ժամանակ չունես... բայց ոչ, ես շարունակ պիտի ձանձրացնեմ քեզ... Ինձ պարտավոր ես» :

«Ներեցեք համարձակությանս, որ Ձեզ անծանոթ... անհանգստացնում եմ»[43]:

«Խնդրեցի մի պաշտոն գտնել ինձ համար... Եթե գրեմ, որ հուսահատությունից վերջ պետք է տամ կյանքիս, թող տարօրինակ չթվա»[44]:

Մեկ ուրիշ անծանոթ գրում է. «Ես կամ ինձպեսները Ձեզ էլ չհայտնեն, ո՞ւմ կարող են հայտնել իրենց ցանկություններն ու իղձերը»[45]:

---

[43] ԳԱԹ, ԹՖ, № 1110 (298լր.):
[44] ԳԱԹ, ԹՖ, № 1618(850):

Պոետը և՛ «ամենակարող», և՛ մատչելի էր թվում ամենքին ու իր բարությամբ մագնիսի պես իրեն էր ձգում շատերին աշխարհի ամենատարբեր անկյուններից: Նրան ուղղված գրություններում անվերջ կրկնվում էին. «Ուրիշ ո՞վ, եթե ոչ Դուք», «Ամբողջ հույսս ձեզ վրա է»[46]:

Թումանյանի ընկեր-բարեկամները գրեթե միշտ իրենց ուղղված խնդրանքները կամ խնդրատուներին ուղարկում էին նրա մոտ: 1920թ. Նար-Դոսը, տեսնելով երիտասարդ բանաստեղծուհի Վարսենիկ Աղասյանի թշվառ վիճակը, արտասվում է ու ասում. «Գնա՛ Հովհաննեսի մոտ... Շատերին է այդ դրությունից ազատել: Հեղինակավոր մարդ է, գնա՛ նրա մոտ, չուշացնե՛ս հա՜»[47]: Վարսենիկը չի ուշացնում: Թումանյանը տարբեր դռներ է ծեծում, ոչ մի արձագանք, թշվառությունը համատարած էր: Մերժում է ստանում և Բարեգործական ընկերությունից, որից հետո նա «Իր գրպանից հանեց մի քանի հազար մենշևիկյան բոն», որը պարտք էր արել իր ընտանիքի հոգսը հոգալու համար և տվեց Վարսենիկին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռազմաճակատից անծանոթ զինվորները բանաստեղծից էին օգնություն խնդրում: Գերմանիայում գերի ընկած մի զինվոր՝ Ն. Մուրադյանը, խնդրում է Թումանյանին ծանրոց ուղարկել ուտելիքներից ու հագուստից: Անծանոթ մի վրացի խնդրում է հանդերձանք ու գումար՝ գնացքի տոմս առնելու և Բաթումից իր իրերը տեղափոխելու համար:

Թումանյանի ազգային ու բարեգործական գործունեությունը առավել ցայտուն դրսևորումներ ունեցավ ցեղասպանության տարիներին: Այդ շրջանում նրա բարեգործական ձեռնարկները բազմա-

---

[45] Նույն տեղում, № 1380 (731):
[46] Նույն տեղում:
[47] ԹԺՀ, 2020, հ. 2, էջ 233:

թիվ էին, և դրանց միայն հիշատակումն ու նկարագրությունը առանձին ուսումնասիրության նյութ է: Մեծաքանակ էին այլ նախաձեռնողների բազմաթիվ բարեգործություններին Թումանյանի մասնակցության վկայությունները: Տարբեր խմբագրություններ (Ալեքսանդրապոլի «Գավառի ձայն», Մոսկվայի «Մամուլի օր» և այլն) խնդրում էին տնօրինել Թումանյանի հոնորարները բարեգործական նպատակներով: Նա չէր մերժում և Ա.Կ. Ջիվելեգովի, ակադեմիկոս, ռուս բանաստեղծ և թարգմանիչ Ի.Ա. Բունինի, Մոսկվայի շրջանային դատարանի նախագահ, հայտնի իրավաբան Նիկոլայ Վ. Դավիդովի հետ մեկտեղելով իր ջանքերը, աջակցում էր հայ և այլազգի կարիքավորներին, իր հոնորարները փոխանցում գաղթականական դպրոցի երեխաների օգտին[48], Ռուսաստանի պատերազմից տուժածներին[49]: Թումանյանը գործուն աջակցություն է ցուցաբերել Հայոց ազգային բյուրոյին ենթարկվող «Պատերազմից վնասվածներին օգնող կենտրոնական կոմիտեին», և այս ցանկը դեռ կարելի է շարունակել:

Ամերիկացիներն անգամ գիտակցում էին Թումանյանի հեղինակության նշանակությունը բարեգործական նպատակով ցանկացած հանգանակության կազմակերպման գործում: 1920 թ. փետրվարին, երբ ամերիկացի ռազմական ու քաղաքական գործիչ Հասկելի նախաձեռնությամբ Վրաստանի Հայոց ազգային խորհրդին կից կազմվեց «Հայ որբերի և գաղթականների օգնության հանգանակիչ կոմիտե», նախագահ ընտրվեց ոչ թե ամերիկացի, այլ հայազգի Թումանյանը[50]: Կոմիտեն հայ-ամերիկյան համատեղ գործու-

[48] ԳԱԹ» ԹՖ, № 1955 (186, 3-րդ ց.):

[49] «День печати» թերթի խմբագրական խորհրդի դիմումը տե՛ս ԳԱԹ, ԹՖ, № 1143 (156 լր ց.):

[50] «Слово», 1920, № 48, փետրվարի 29:

նեության հարթակ էր[51]: Բանաստեղծը կոչով դիմում է հայ հասարակությանը՝ ասելով, որ բարեգործությունը միայն «հարուստների գործ չի, այլ ամենքիս... Ով ինչքանով որ կարող է՝ օգնության պիտի գա մեր որբերին ...»[52]:

Բարեգործությունը համարելով նաև ազգային արժանապատվության խնդիր՝ Թումանյանն ասում է. «Ամեն մի հայի տուն պետք է իր վրա կամավոր ամսական տուրք վերցնի, ինչքան կարող է... Ո՛չ ուրիշ ելք կա և ո՛չ էլ արդարանալու որևէ ճանապարհ»[53]:

Հանգանակության կոչ անելիս բանաստեղծը միշտ սկսում էր իրենից ու իր ընտանիքից: Նա կամովին տուրք է վերցնում՝ իր ընտանիքի անունից ամսական որբերի ու գաղթականների ֆոնդին վճարելով 300 ռուբլի: Իր անձնական օրինակով փորձում է հայության մեջ մտցնել կամավոր ընդհանուր տուրք: Մինչ այդ նա արդեն կամավոր տուրք էր վերցրել ՝ յուրաքանչյուր ամիս համաժողովրդական գանձարանին վճարել 200 ռ., գումար, որն ավելին էր, քան հատկացնում էր իր զավակներին: Բացի այդ, Թումանյանը ընտանիքի կողմից կատարում էր նաև միանվագ վճարումներ: 1920 թ. ապրիլի 24-ին տպագրված մարտ ամսին որբերի համար հանգանակված գումարների նվիրատուների ցուցակում առկա էր նաև բա-

---

[51] Նույն տեղում, թիվ 88, ապրիլի 21. Կոմիտեի անդամներն էին դաշնակից պետությունների գերագույն կոմիսարի ներկայացուցիչ Էրնեստ Հարոուն, իշխան Բորիս Արղության Երկայնաբազուկը (գանձապահ) և Տիգրան Հովհաննիսյանը (քարտուղար):

[52] Կոչի սևագիրը պահվում է ԳԱԹ, ԿԸ ֆ., № 107/3: Այն տեղ չի գտել բանաստեղծի գիտական հրատարակություններում: Առաջին անգամ հատվածաբար մենք հրապարակել ենք իմ «Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» մենագրության մեջ, Եր., 2009, էջ 124: Ամբողջական տեքստը՝ «Վրաստանի հայ ժողովուրդ» վերնագրով, կոմիտեի նախագահի և անդամների անունով, տպագրվել է «Նոր աշխատավորում» (Թիֆլիս, 1920, № 11 (83), ապրիլի 17), «Слово», 1920, № 48, փետրվարի 29:

[53] «Աշխատավոր», Թիֆլիս, 1920, № 16, հունվարի 22: Տե՛ս նաև Թումանյան 1995, հ. 7, էջ 397:

նաստեղծի ընտանիքի բոլոր անդամների անուններն ու մարտ ամսից նրանց ամսավճարի գումարի չափը՝ 1870 ռ.[54]:

Ուշագրավ է, որ ցուցակում կային ոչ միայն Թումանյանի բոլոր զավակների, այլև նույնիսկ երկու թոռնիկների՝ Աշխենի որդի վեցամյա Հովիկի և Մուշեղի դուստր երկամյա Անահիտի (Շաղիկի) անունները: Բայց զարմանալի էր, որ ցուցակում կար նաև 1918 թ. մարտին թուրքի յաթաղանի զոհ դարձած որդու՝ Արտավազդի անունը[55]: Մի կողմից հայրը չէր ուզում հաշտվել որդու ողբերգական մահվան հետ, մյուս կողմից՝ ուզում էր երեք տարի շարունակ Արևմտյան Հայաստանում, պատերազմի թոհուբոհում որբեր խնամող զավակի անունը տեսնել հայ որբերի ու գաղթականների բարերարների ցանկում: Չնայած այս զոհողություններին՝ հերթական անգամ մեծահարուստների հետ մի սեղանի շուրջ նստելու, նրանց հետ համագործակցելու համար բանաստեղծը հայկական որոշ շրջանակներում արժանացավ հանիրավի հարձակումների: Մասնավորապես, Բաքվի հայ բոլշևիկները նրան մեղադրեցին համաշխարհային իմպերիալիստներին, բուրժուազիային ծառայելու մեջ: 1920 թ. հուլիսի 7-ին լույս է տեսնում Սեյրիի[56] «Հերիք է մուրալ» հոդվածը, որտեղ ասվում էր. «Հովհաննես Թումանյանը որպես բանաստեղծ մեծ համբավ ու համարում է ստացել... այդ համբավը ուժ է տալիս նրան գրական միջավայրից թևակոխելու անպայման քաղաքական ասպարեզներ: Հովհաննես Թումանյանը մի կողմից մասնակցելով Լոռու, Բորչալուի, Ախալքալաքի վեճերին, պաշտպանելով Հայաստանի տերիտորիալ շահերը, իսկ մյուս կողմից խաղաղասիրական այցերը, տեսակցություններ անելով վրաց մեծամեծերի հետ- երևան է հանում բուրժուազիայի երկու երեսը...

---

[54] «Աշխատավոր», 1920, № 17, ապրիլի 24:

[55] Նույն տեղում:

[56] **Սեյրի-Գուլոյան Ավետիք Համբարձումի** – (1878 Սալմաստի գվ. Հաֆթվան գ. – սպանվ.1920, Ղափան (Կապան)) – գրող, բոլշևիկ:

Թումանյանը չգիտի, իհարկե, և դա հասկանալի է, որ այդ որբերը նույն Հասկելի գործն են ... Այստեղ մի կարևոր հանգամանք էլ այն է, որ մեծափառ աղան պրիկաշչիկին աթոռ է տալիս իր կողքին նստելու... Թումանյանը նստում է Հասկելի հետ, խոսում է քաղաքական կուլտուրական բարձր հարցերից գուցե և կատակում է մի քիչ: Սրանով պետք է հպարտանա հայ ժողովուրդը. չէ՞ որ Թումանյանը դա հայ ժողովուրդն է, որին այդպիսի պատիվ է անում գերազնիվ Հասկելը»[57]:

Իսկ Թումանյանը պատրաստ էր ընդունել ցանկացած օգնություն, որը կփրկեր թեկուզ մեկ որբի կյանք:

Թումանյանն իր անձնական օրինակով ուզում էր հավաստել, որ բարեգործությունը ազգեր ու սահմաններ չի ճանաչում: Ու թեև նրա ապրած դարաշրջանում ամենից շատ օգնության կարիք ուներ հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, նա **1920 թ. գրքերի հրատարակության իր իրավունքը** վաճառելով, ստացած գումարից 10 000 ռուբլի հատկացրեց հայ որբերին, 10 000 ռ. Վրաստանի երկրաշարժից տուժածներին, 10 000 ռ. էլ՝ Ռուսաստանի սովյալներին[58]:

Ավարտ

Բարեգործությունը Հովհ.Թումանյանի էությունն էր: Այս գիտակցությունը ունեին բանաստեղծի ժամնակակիցները: Աշոտ Աթանասյանի[59] «Օհանես Թումանյան» հոդվածում կարդում ենք. «Հայերս երեք ամենաժողովրդական մարդիկ ունենք՝

Քաջ Անդրանիկ,

Պողոս Նուպար Փաշա և...

---

[57] Սեյրիի, «Հերիք է մուրալ». «Կոմունիստ» օրաթերթ, Բաքու, № 42, 1920, հուլիսի 7:

[58] «Աշխատավոր», Թիֆլիս, 1920, № 55

[59] Աշոտ Նահապետի Աթանասյան – 15.02.1870, Երևան – 22.03.1941) – մարտի 22, Երևան, գյուղատնտես, խմբագիր-հրատարակիչ, երգիծաբան:

Օհանես Թումանյան

...Եվ միայն մեր Օհանեսն է ... որ այսօր իր լղար մարմնով և լղար քսակով կանգնել է Պողոս Նուպար փաշայի կողքին և ասում է նրան.

– Արի տեսնենք՝ ո՞վ է մեզանից հարուստը:

Անդրանիկի կողքին

– Տեսնենք՝ ո՞վ էլ մեզանից քաջը:

Խատիսովի առջև.

– Տեսնենք՝ ո՞վ է մեզանից ճարտարը:

Եվ ես կերդվեմ, որ Հայաստանի բոլոր վարժապետները, վարդապետները, գրող-մրողները, մինիստրները, լիդերները, օրիորդներն ու տիկինները, վարժուհիներն ու անվարժները իրանց ձայնն ու մատը կտան հօգուտ մեր Օհանեսի: Ով ինձ հետ համաձայն չէ, նա կամ նախանձոտ է, կամ՝ դրա ավելի վատ տեսակը»[60]:

Բանաստեղծություններից մեկում (1918 թ. հունվար) պոետն իր երջանկությունը որոնում էր հոգու գանձերը, նաև «ճոխ պարգև» ստացած բարությունը շռայլելու մեջ.

Գանձեր ունեմ անտա՛կ, անծե՛ր,

Ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ,

Ծով բարություն, շընորհք ու սեր

Ճոխ պարգև եմ առել վերուստ[61]:

Համո Սահյանը վստահ էր, որ Թումանյանի. «Բարությունը մեր ազգի ուժն է... Երբեմն մտածում ես, ո՞ւր է թե ազգը կարողանար էդքան բարի լինել»[62]:

---

[60] «Մշակ», 1919, փետրվարի 20, № 40, էջ 3:

[61] **Թումանյան** 2018, հ. 1, էջ 317:

[62] **Հարություն Հովնաթան** «Խոսում է Համո Սահյանը» Զրույցներ, Վարք-Երևան, 1992, էջ 42:

Թումանյանի բարեգործությունը մի կողմից օրինակելի է, մյուս կողմից՝ անօրինակ, քանի որ նրա գործունեությունը հայոց և, առհասարակ, բարեգործության պատմության մեջ յուրահատուկ է ու աննախադեպ:

ОВАНЕС ТУМАНЯН И БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ

ОВАНЕСЯН С.

Резюме

Ключевые слова: благодетель, благотворитель, меценат, мораль, Ованес Туманян, Литературный фонд, благотворительные пособия, «Армянский комитет», «Помощь пострадавшим от войны».

Ованес Туманян правомерно стоит в одном ряду с прославленными благотворителями армянского народа, для которых благотворительность была не просто сферой деятельности, а самим образом жизни.

Для Туманяна благотворительность была моральной категорией и находилась только в сфере нравственных ценностей. Она должна была быть добровольной, незаметной, без напускного благочестия, без тщеславия и демонстрации честолюбия, без унижения и нарушения человеческого достоинства. Поэт был убежден, что благотворительность в армянской действительности – это не оказание милости, а прежде всего фактор, обеспечивающий национальное и общественное единство и сплоченность, и поэтому благотворительность должна основываться на осознании национальных ценностей. В представлении поэта национально-патриотическая деятельность – это не монополия отдельных лиц

или богатых людей, а достояние всего народа, каждого армянина.

Ов. Туманян считал благотворительность обязанностью и правом каждого, поскольку она вытекала из добродетели личности, а не из материальных возможностей благотворителя.

Туманян всегда пребывал в материальной нужде, но при этом имел репутацию богатого человека, всемогущего благотворителя. В этом смысле ему нет равных в истории нашей культуры. Благодаря поэту финансировались разные благотворительные проекты, создавались различные образовательные и культурные фонды.

Благотворительность Туманяна охватывала различные сферы армянской национальной жизни: национально-общественную, образовательно-культурную, военную и другие. В течение десяти лет он возглавлял Кавказское общество армянских писателей и Литературный фонд, ставший реальным подспорьем для бедствовавших армянских писателей и интеллектуалов.

Национальная и благотворительная деятельность Туманяна стала более заметной в годы Первой мировой войны и послевоенные годы. В феврале 1920 г. поэт был избран председателем «Комитета помощи армянским сиротам и переселенцам», организованного по инициативе Гаскеля.

Призывая к сбору пожертвований, поэт всегда начинал с себя и своей семьи, ежемесячно внося добровольный взнос в национальную казну, нередко осуществляя также единовременные выплаты.

Благотворительные инициативы Туманяна в годы Геноцида разнообразны и многочисленны. Он оказывал активную под-

держку «Центральному комитету помощи пострадавшим от войны», подчинявшемуся Национальному бюро Армении. Туманян участвовал в благотворительных мероприятиях соседних народов, особенно грузин и русских, чтобы личным примером доказать, что благотворительность не признает наций и границ.

HOVHANNES TUMANYAN AND CHARITY

HOVHANNISYAN S.

SUMMARY

Keywords: benefactor, contributor, patron, moral, Hovhannes Tumanyan, Literary Fund, charity, «Armenian Committee», «Relief to the Victims of the War».

Hovhannes Tumanyan rightly takes his place among the glorious benefactors of the Armenian people, for whom charity was not only a special sphere of activity, but a way of life.

For Tumanian, charity was a moral category and existed only in the realm of morality. It's a duty to be voluntary, unnoticed, without artificial piety, without vanity and demonstration of honour, without humiliation and violation of human dignity. He was convinced that in Armenian reality, charity is not a sign of mercy, but above all a factor of national and natural unity and solidarity, and thus a fundamental basis of nationality. In the poet’s perception national-patriotic activity was not a monopoly of separate persons or rich people, but the property of the whole nation, of every Armenian.

Hovh. Tumanyan considered charity to be the duty and right of everyone, as it was based on the virtue of the individual, and not on the material possibilities of the benefactor.

Tumanyan was always in material need, but at the same time he had the reputation of being a rich man, an all-powerful benefactor. In this sense, he has no equal in the history of our culture. Thanks to the poet, various charitable projects were financed, and various educational and cultural funds were established.

Tumanyan's benevolence was praised in various spheres of Armenian national life: national-social, educational-cultural, military and others. For ten years he headed the Caucasian Society of Armenian Writers and the Literary Fund, which became a real support for poor Armenian writers and intellectuals.

Tumanyan’s national and charitable activity became more noticeable in the first years of the First World War and the post-war years. In February 1920, he was elected president of the “Committee for the Relief of Armenian Orphans and Displaced Persons”, organized on the initiative of Haskel.

When calling for donations, the poet always started with himself and his family, making a monthly voluntary contribution to the national treasury, often making single payments.

Tumanyan's charitable initiatives during the years of the Genocide were varied and numerous. He actively supported the «Central Committee for Relief to the Victims of the War», subordinate to the National Bureau of Armenia. Tumanyan participated in charity events of neighboring peoples, especially Georgians and Russians, in order to prove by personal example that charity does not recognize nations and borders.